ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են 95 հեռուստաընկերություն, որից 40-ը՝ վերգետնյա եթերային, 55-ը՝կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող և 18 ռադիոընկերություն:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացվել հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու 14 դիմում, որից 4-ը մերժվել է՝ ներկայացված գործարար ծրագրի իրատեսական և հիմնավորված չլինելու հիմքով: Արդյունքում տրամադրվել է կաբելային (մալուխային) հեռարձակման 10 լիցենզիա, որից 3-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 3-ը՝ Երևան քաղաքի և 4-ը՝մեկ մարզի տարածքում սփռման համար (Հավելված 1):

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի դիմումի հիման վրա Հանձնաժողովը 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 36-Ա որոշմամբ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությանը տվել է թույլտվություն՝ Երևան քաղաքում 91,1 ՄՀց հաճախականությամբ առանց լիցենզավորման հոգևոր-մշակութային ռադիոծրագիր հեռարձակելու համար:

2015 թվականին դադարեցվել է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 4 լիցենզիա՝ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով, և 5 լիցենզիա՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումների համաձայն (Հավելված 2):

Անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցնելու գործընթացի շրջանակում կատարվել են «ՑԱՅԳ» և «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերություններին հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու համար հատկացված կապուղիների փոփոխություններ (Հավելված 3):

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով [1] պայմանավորված 2015 թվականին Հանձնաժողով ներկայացվել և բավարարվել է լիցենզիայի գործողության ժամկետի

[1] «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2015 թվականի հունիսի 23-ի ՀՕ-68-Ն օրենք:

երկարաձգման 12 հայտ, որի արդյունքում մարզային անալոգային հեռուստաընկերությունների (հետագայում՝ տեղական հեռուստաընկերություններ) լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգվել են մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, այնուհետև, օրենքում կատարված մեկ այլ փոփոխության[2] համաձայն վերոնշյալ ընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև յուրաքանչյուր լիցենզիայով սահմանված սփռման տարածքը ներառող մարզում հեռարձակման նոր մրցույթի անցկացումը և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը (Հավելված 4): Կատարված օրենսդրական փոփոխությունը, նպատակ հետապնդելով խթանել տեղական հեռուստաընկերությունների գործունեությունը, այդ հեռուստաընկերություններին հնարավորություն է ընձեռել շարունակել իրենց գործունեությունը՝ միաժամանակ ազատելով պետական տուրքի վճարումից:

Հանձնաժողովին վերապահված լիցենզավորման գործառույթի շրջանակում իրականացվել է նաև լիցենզիայի վերաձևակերպում, կրկնօրինակի տրամադրում:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերություններին ոչ սեփական և սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման (հեռարձակման) թույլտվություն տալու գործառույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է հեռարձակման իրավունքը հավաստող ավելի քան 300 պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, ստուգվել է դրանց համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Արդյունքում կայացվել է ոչ սեփական և սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման (հեռարձակման) թույլտվություն տալու 58 որոշում:

Հանձնաժողովի կողմից իրականացված վերոնշյալ գործառույթների արդյունքում 2015 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ գործել են 91 լիցենզավորված հեռուստաընկերություն, որից 36-ը՝ վերգետնյա եթերային (Հավելված 4), 55-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող (Հավելված 5):

Վերգետնյա եթերային 36 հեռուստաընկերություններից 6-ը հանրապետական սփռման են, որից 1-ը՝ վերահեռարձակում իրականացնող, 9-ը մայրաքաղաքային սփռման են, ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող, 21-ը տարածքային սփռման են, այդ թվում 12-ը՝ տեղական հեռուստաընկերություններ:

[2] «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-202-Ն օրենք:

Բացի վերը նշվածից Հայաստանի Հանրապետությունում գործել են նաև «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲ ընկերությունները, միջպետական պայմանագրի հիման վրա հեռարձակվել է «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի հեռուստածրագիրը (Հավելված 4):

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող 55 հեռուստաընկերություններից 10-ը գործել է Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 13-ը՝ Երևան քաղաքում, 2-ը՝ մեկից ավելի մարզերում, 30-ը՝ մեկ մարզի տարածքում:

2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել է 18 ռադիոընկերություն (Հավելված 6), որից 3-ը՝ Երևան քաղաքի և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերի, 12-ը՝ Երևան քաղաքի, 3-ը՝ մեկ մարզի տարածքում:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները հաշվետու ժամանակահատվածում ապահովել են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, «կրկնօրինակ» տրամադրելու համար գանձված գումարների հաշվին: 2015 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է 226 270 180 ՀՀ դրամ, այդ թվում՝ 2 954 540 ՀՀ դրամ տույժ:

2015 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի 2 100 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների 1 860 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.10.2015թ-ի թիվ 82-Ա որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից քարոզչություն կատարողների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը» հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը իրականացրել է

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող եթերային հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում (10.10.15-04.12.15թթ.), անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) մշտադիտարկում: Հանձնաժողովն ուղղակի մշտադիտարկումն (այդ թվում՝ գործուղումների ընթացքում) իրականացրել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները 17.10.2015թ., 27.10.2015թ. և 09.12.2015թ. Հանձնաժողով են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին տեղեկատվություն:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի անմիջական դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի տեղեկանքներում, որոնք, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 19.10.2015թ., 29.10.2015թ. և 11.12.2015թ. հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում (10.10.15-04.12.15թթ.), ինչպես նաև քվեարկության օրը մինչև ժամը 20^{00}-ն և դրան նախորդող օրը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել: Քարոզչություն կատարողներին վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի սակագնի սահմանման և քարոզչության ժամանակահատվածում սակագնի փոփոխության, եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի պահանջների խախտումներ նույնպես չեն արձանագրվել:

Ուղղակի մշտադիտարկման իրականացման նպատակով Հանձնաժողովը հրավիրել և իր աշխատանքներում ներգրավել է մասնագիտական լրացուցիչ ռեսուրսներ:

ԼՂ Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովից քարոզարշավի ողջ ընթացքում Հանձնաժողով են գործուղվել որակավորված աշխատակիցներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար կիրառել է հետևյալ վարչական տույժերը.

Գրավոր նախազգուշացում՝ հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնող «ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության (սփռման տարածքը՝ ՀՀ, Արագածոտնի մարզ) նկատմամբ, ինչպես նաև հյուրանոցային ծառայություններ (հյուրանոցային համալիր, հանգստյան տուն) մատուցող տասներկու ընկերությունների նկատմամբ,

Տուգանք՝ հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող չորս ընկերությունների («Տելեպորտ» ՍՊ, «Դայանանետ» ՍՊ, «Ֆլայ ՏՎ» ՍՊ և «Սպայդեր Սիստեմ» ՍՊ ընկերությունների) նկատմամբ՝ համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2015 թվականին հեռուստաընկերությունների կողմից իրականացված իրավախախտումների համար կիրառված տուգանքներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է 1 մլն ՀՀ դրամ:

2015 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի դեմ դատական վարույթներ չեն հարուցվել:

2015 թվականին Հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) 41-րդ (գարնանային) և 42-րդ (աշնանային) նստաշրջաններին, ինչպես նաև Սևծովյան տնտեսական համագործակցության հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) 6-րդ տարեկան հանդիպմանը, որը Ազգային հանձնաժողովի առաջարկությամբ տեղի է ունեցել Երևանում՝ 2015 թվականի նոյեմբերի 19-ին և 20-ին: Այս հանդիպման ժամանակ

քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են առևտրային հարաբերությունները ինչպես իրավական, այնպես էլ կիրառման տեսանկյունից, թաքնված գովազդը, հովանավորությունը, հեռուստախանութները, սոցիալական հոլովակները, հաղորդումները, որոնց ընթացքում արգելվում է գովազդը և ապրանքները, որոնք չեն կարող գովազդվել:

Հանձնաժողովը մասնակցել է նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված Հարավկովկասյան 12-րդ մեդիա-համաժողովին՝ «Թվայնացումը որպես զանգվածային լրատվության միջոցների անկախության գործիք» խորագրով:

Հանձնաժողովը համագործակցել է օտարերկրյա պետություններում հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող մարմինների հետ: Մասնավորապես, քննարկումներ են կազմակերպվել Ազգային հանձնաժողովի և Իտալիայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Չեխիայի Հանրապետության համապատասխան կառույցների հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեռուստառադիոհեռարձակման ոլորտում օրենսդրության արդյունավետ կարգավորման և այլ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ է փորձի, տեղեկատվության և մշտական խորհրդատվության փոխանակում և հիմնվելով փոխադարձ հարգանքի, վստահության և գործընկերության սկզբունքներին, Հանձնաժողովը համագործակցության համաձայնագիր է կնքել Իտալիայի Հանրապետության հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող մարմնի հետ:

Հանձնաժողովի և Չեխիայի Հանրապետության կարգավորող մարմնի միջև համագործակցության շրջանակներում, 2015 թվականի մարտին Ազգային հանձնաժողովի և հայաստանյան առաջատար մի շարք հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ Պրահա քաղաքում հանդիպել են Չեխիայի կարգավորող մարմնի և չեխական հեռուստաընկերության ներկայացուցիչների հետ: Այս այցի նպատակն է եղել ամրապնդել երկու երկրների համանման կառույցների և հեռուստաընկերությունների միջև հարաբերությունները, բացահայտել փոխգործակցության նոր ուղիներ:

Հանձնաժողովը համագործակցել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ, Լոնդոնի հաղորդակցությունների միջազգային ինստիտուտի հետ միասին 2015 թվականի հունիսի 29-ին և 30-ին Երևանում

կազմակերպվել և անցկացվել է միջազգային մեդիա համաժողով: Նշված համաժողովին մասնակցել են հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող մարմինների, արտասահմանյան երկրներում գործող մեդիա ոլորտի առաջատար ընկերությունների, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների, հեռուստատեսային և ռադիո ընկերությունների, կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ:

Հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ներկայացուցիչների հետ:

Հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության հետ առնչվող հարցերի լուսաբանումը հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, ինչպես նաև նորությունների մասին տեղեկատվության տեղադրումը Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2015 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 40 նիստ, որում ընդունվել է 103 անհատական որոշում:

Հանձնաժողով մուտքագրվել է 754 գրություն, ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 6 դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, լեզվի անաղարտության, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու մասին և այլն), որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին, Հանձնաժողովն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի 36 նախագծերի:

2015 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմը անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար 3 մրցույթ, 6 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են և 11 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

Հավելված 1
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2015 թվականի հաղորդման

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
1	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	ՀՌԱՀ 05.03.2015թ. թիվ 6-Ա որոշում	N 201 23.03.2015թ.
2	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	ՀՌԱՀ 13.03.2015թ. թիվ 11-Ա որոշում	N 202 31.03.2015թ.
3	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 19.06.2015թ. թիվ 63-Ա որոշում	N 203 06.07.2015թ.
4	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 25.06.2015թ. թիվ 65-Ա որոշում	N 204 10.07.2015թ.
5	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	Հանրապետական	ՀՌԱՀ 11.09.2015թ. թիվ 79-Ա որոշում	N 205 15.09.2015թ.
6	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ՀՌԱՀ 04.11.2015թ. թիվ 88-Ա որոշում	N 206 06.11.2015թ.
7	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	ՀՌԱՀ 04.11.2015թ. թիվ 90-Ա որոշում	N 207 06.11.2015թ.
8	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 04.11.2015թ. թիվ 89-Ա որոշում	N 208 24.11.2015թ.
9	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	ՀՌԱՀ 08.12.2015թ. թիվ 97-Ա որոշում	N 209 28.12.2015թ.
10	«ԻՆՔՈՄ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 08.12.2015թ. թիվ 98-Ա որոշում	N 210 29.12.2015թ.

Հավելված 2
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2015 թվականի հարորդման

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով			
հ/հ	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը**
1	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	23.03.2015թ.
2	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան	13.07.2015թ.
3	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	08.11.2015թ.
4	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	28.12.2015թ.
Դիմումների հիման վրա			
հ/հ	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Որոշման ամսաթիվը, համարը**
1	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	ք. Արարատ	ՀՌԱՀ 05.03.2015թ. թիվ 8-Ա որոշում
2	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 25.08.2015թ. թիվ 74-Ա որոշում
3	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 11.09.2015թ. թիվ 77-Ա որոշում
4	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 29.12.2015թ. թիվ 102-Ա որոշում
5	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 29.12.2015թ. թիվ 103-Ա որոշում

Հավելված 3
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2015 թվականի հաղորդման

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը	Շահագործված կապուղի	Փոխարինված կապուղի	Որոշման ամսաթիվը, համարը
1	«ՑԱՅԳ» ՍՊԸ	28-րդ	7-րդ	ՀՌԱՀ 15.06.2015թ. թիվ 61-Ա որոշում
2	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ	8-րդ	12-րդ	ՀՌԱՀ 15.06.2015թ. թիվ 61-Ա որոշում

Հավելված 4
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2015 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	Ընկերության անվանումը, հեռուստածրագրի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հ1 ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՀԾ	հանրապետական	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	հանրապետական	-
3	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	հանրապետական	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ «h2» ՀԾ	հանրապետական	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	հանրապետական	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	հանրապետական	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	հանրապետական	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«ԱՆՄՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (РТР планета) ՀԾ	հանրապետական	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
	ք. ԵՐԵՎԱՆ		
1	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղ «ՄԻՐ» ՀԾ	մայրաքաղաքային	–

2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱՐ» ՀՇ	մայրաքաղաքային	N 148 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒԶ» ՀՇ	մայրաքաղաքային	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«Հ3» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հ3» ՀՇ	մայրաքաղաքին	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀՇ	մայրաքաղաքային	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «21 ԹԻՎԻ» (21 TV) ՀՇ	մայրաքաղաքային	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՍԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀՇ	մայրաքաղաքային	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀՇ	մայրաքաղաքային	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.
9	«ԱԴՎԵՐՏԱ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՑ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀՇ	մայրաքաղաքային	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ «ԿՈՒԼՏՈՒՐԱ» (Культура) ՀՇ	մայրաքաղաքային	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	N 167 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀՇ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «ԼՈՒՅՍ» ՀՇ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.

2	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ «ԱՎԵՏԻՍ» ՀԾ	ք. Էջմիածին	N 43 12.04.2002 թ.*
3	«ԹԵՎ» ՍՊԸ «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 18.04.2002 թ.*
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 18.04.2002 թ.*
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ	ՀՀ Լոռու մարզ	N 150 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ «9-ՐԴ ԱԼԻՔ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 18.04.2002 թ.*
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 03.07.2002 թ.*
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 25.10.2003 թ.*
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 01.11.2003 թ.*
6	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ «ՍԼԱՎ ՄԵԴԻԱ» ՀԾ	ք. Սպիտակ	N 97 22.02.2005 թ.*
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ԱԲՈՎՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԲՈՎՅԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ «ՀՐԱԶԴԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ք. Հրազդան,	N 89 12.01.2004 թ.*
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ «Շ 1» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	–

2	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005թ.*
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԶԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ՍՈՍԻ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
-	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ «ՏԱՎՈՒՇ» ՀԾ	ՀՀ Տավուշի մարզ	N 159 20.01.2011 թ. 20.01.2021 թ.
2	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ «ՔԱՄՈՒՏ» ՀԾ	ք. Նոյեմբերյան	N 81 01.11.2003 թ.*
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՀԾ	ք. Իջևան	N 85 06.11.2003 թ.*

* Նշված անալոգային հեռարձակում իրականացնող տեղական հեռուստաընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև յուրաքանչյուր լիցենզիայով սահմանված սփռման տարածքը ներառող մարզում հեռարձակման նոր մրցույթի անցկացումը և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը:

Հավելված 5
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2015 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ)

ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	**Ընկերության անվանումը հեռուստածրագրի անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի համարը և գործողության ժամկետը**
		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
1	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	հանրապետական	N131 18.12.2007թ. 18.12.2017թ.
2	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	հանրապետական	N144 23.10.2010թ. 23.10.2020թ.
3	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	հանրապետական	N186 16.10.2012թ. 16.10.2022թ.
4	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	հանրապետական	N187 06.11.2012թ. 06.11.2022թ.
5	«ԷՍ ՊԵ ԲԵ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	հանրապետական	N192 17.08.2013թ. 17.08.2023թ.
6	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ք. Երևան, Սյունիքի մարզ	N 188 18.12.2012թ. 18.12.2022թ.
7	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N195 15.04.2014թ. 15.04.2024թ.
8	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ. 01.04.2025թ.
9	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	հանրապետական	N 205 16.09.2015թ. 16.09.2025թ.
10	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ. 24.11.2025թ.

Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N 121 05.09.2006թ. 05.09.2016թ.
2	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	ք. Երևան	N129 16.11.2007թ. 16.11.2017թ.
3	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N137 20.03.2010թ. 20.03.2020թ.
4	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N140 26.05.2010թ. 26.05.2020թ.
5	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	N141 26.05.2010թ. 26.05.2020թ.
6	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N146 23.12.2010թ. 23.12.2020թ.
7	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N174 10.06.2011թ. 10.06.2021թ.
8	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան	N179 01.09.2011թ. 01.09.2021թ.
9	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N184 15.06.2012թ. 15.06.2022թ.
10	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
11	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015 թ. 07.07.2025 թ.
12	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 204 14.07.2015թ. 14.07.2025թ.
13	«ԻՆՔՈՄ» ՍՊԸ	ք. Երևան	N 210 30.12.2015թ. 30.12.2025թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ՀՀ Կոտայքի մարզ	N194 11.01.2014թ. 11.01.2024թ.

2	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզեր	N200 25.12.2014թ. 25.12.2024թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N147 23.12.2010թ. 23.12.2020թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N181 31.01.2012թ. 31.01.2022թ.
3	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ք. Մասիս	N178 09.08.2011թ. 09.08.2021թ.
4	«ԿԻՄ-ՌԱՅ » ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N130 20.11.2007թ. 20.11.2017թ.
2	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	N138 23.03.2010թ. 23.03.2020թ.
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
2	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N126 27.09.2007թ. 27.09.2017թ.
3	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	N133 07.04.2009թ. 07.04.2019թ.
4	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ	N136 22.12.2009թ. 22.12.2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 112 04.04.2006թ. 04.04.2016թ.
2	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N145 23.12.2010թ. 23.12.2020թ.
3	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N 118 08.07.2006թ. 08.07.2016թ.
2	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N125 02.08.2007թ. 02.08.2017թ.
3	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ք. Չարենցավան	N128 15.11.2007թ. 15.11.2017թ.
4	«ՀԱՃԸՆ ԻՄՊ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N176 09.07.2011թ. 09.07.2021թ.
5	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N177 04.08.2011թ. 04.08.2021թ.
6	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N197 20.08.2014թ. 20.08.2024թ.
7	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N122 01.08.2007թ. 01.08.2017թ.
3	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N175 09.07.2011թ. 09.07.2021թ.

4	«ՖԼԱՅ ՏՎ» ՍՊԸ	ք. Գյումրի	N196 01.06.2014թ. 01.06.2024թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 119 08.07.2006թ. 08.07.2016թ.
2	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ. 09.10.2024թ.
3	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ. 24.03.2025թ.
4	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 209 29.12.2015թ. 29.12.2025թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N127 29.09.2007թ. 29.09.2017թ.

Հավելված 6
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2015 թվականի հաղորդման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

հ/հ	Ընկերության անվանումը ռադիոկայանի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը գործողության ժամկետը
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ռադիոծրագիր	ք. Երևան, մարզեր	-
	Ք. ԵՐԵՎԱՆ		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՄ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	-
2	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՎԵՄ» հոգևոր-մշակութային ռադիոծրագիր	ք. Երևան	Գրավոր թույլտվություն ՀՌԱՀ 27.04.2015թ. թիվ 36-Ա որոշում
3	«ՖՄ-102.4» ֆրանսիական ծրագիր	ք. Երևան	-
4	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ԱՐՁԱԳԱՆՔ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 42 12.04.2002թ. 20.07.2016թ.
5	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԼԱՎ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 50 22.04.2002թ. 20.07.2016թ.
6	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 51 22.04.2002թ. 20.07.2016թ.
7	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 52 22.04.2002թ. 20.07.2016թ.
8	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 55 30.04.2002թ. 20.07.2016թ.
9	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ » ՓԲԸ «ՍԻԹԻ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 56 03.07.2002թ. 20.07.2016թ.
10	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 61 16.12.2002թ. 20.07.2016թ.

11	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» (Русское радио) ռադիոծրագիր	ք. Երևան	N 72 09.10.2003թ. 20.07.2016թ.
12	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 92 20.07.2004թ. 20.07.2016թ.
13	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 95 19.02.2005թ. 20.07.2016թ.
14	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 101 26.02.2005թ. 20.07.2016թ.
15	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՋԱՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 116 06.06.2006թ. 20.07.2016թ.
16	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոծրագիր	ք. Երևան	N 117 06.06.2006թ. 20.07.2016թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոծրագիր	մարզեր	N 99 24.02.2005թ. 20.07.2016թ.
2	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	մարզեր	N 100 26.02.2005 թ. 20.07.2016 թ.
3	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	մարզեր	N 108 23.09.2005 թ. 20.07.2016թ.
ՄԵԿ ՄԱՐԶ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ Շիրակի հանրային ռադիո	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոծրագիր	ք. Գյումրի	N 65 04.07.2003թ. 20.07.2016թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ԻՆՏԵՐԿԱՊ» ռադիոծրագիր	ք. Վանաձոր	N 87 16.12.2003թ. 20.07.2016թ.
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր	ք. Ծաղկահովիտ	N 110 18.11.2005թ. 20.07.2016թ.